ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Մարտունի, Եռահարկան 2,
հեռ. 060-74-34-01

N 75

07 փետրվարի 2018թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԲՈԹՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բոթոյան

Ձեզ ենք ներկայացնում Մարտունի համայնքի ավագանու 01.02.2018թ. նիստի արձանագրությունը և որոշումները:

Առդիր՝ 7 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատարող՝
Գ. Ոսկանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ -2

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 01 ՓԵՏՐՎԱՐԻ 2018Թ. ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ:

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու 14 անդամներից 8 -ը՝ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա.ԳԱԼՍՏՅԱՆ, Ռ.ԴԱՎԹՅԱՆ, Վ.ԴԱՎԹՅԱՆ, Ա.ՋԻՐՈՅԱՆ, Ա.ՄՈՍՈՅԱՆ, Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ,Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ա.Ավետիսյանը
Քարտուղարությամբ՝ Գ.Ոսկանյանի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

ՀԱՐՑ-14. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ-15. «ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ՄԻՆՉԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ը ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈԱԿ-Ի ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԱՌԱՋԻԿԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՆՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ-16.ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մարտունի համայնքի ավագանին որոշեց հաստատել նիստի օրակարգը՝

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Ռ.ԴԱՎԹՅԱՆ
Ա.ՄՈՍՈՅԱՆ
Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա.ՋԻՐՈՅԱՆ

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ
Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա.ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 14

«01»-ը փետրվարի 2018թ. *Ք. Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի պահանջներով,

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի ամենամյա գույքագրման փաստաթղթերը (կից ներկայացվում է):

2. Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի հողային հաշվեկշռի չափերում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի չափը պակասեցնել օտարված հողամասերի չափով՝ 31636,7 քմ-ով:

բ) Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի չափը ավելացնել սեփականաշնորհումից հրաժարված քաղաքացիների հողամասերի չափով՝9350 քմ վարելահող և 2520 քմ խոտհարք:

3.Հաստատել Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող հետագա օգտագործման համար ոչ պիտանի գույքերի ցանկը ըստ համայնքապետարանի ենթակայության կառույցների (կից ներկայացվում է):

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝6, դեմ՝ 0, ձեռնպահ՝2

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Ռ.ԴԱՎԹՅԱՆ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՄՈՍՈՅԱՆ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ ձեռնպահ՝ Վ.ԴԱՎԹՅԱՆ

Ա.ՋԻՐՈՅԱՆ Ա.ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 15

«01»-ը փետրվարի 2018թ. *Ք.Մարտունի*

«ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ը ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈԱԿ-Ի ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԱՌԱՋԻԿԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՆՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Համաձայնություն տալ «Մարտունի քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ից աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության գնումը կատարել մինչև 2018 թվականի փետրվարի 20-ը:

2.Համաձայնություն տալ 24821500 (քսանչորս միլիոն ութ հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր) դրամ գումարով մրցույթ հայտարարելու Մարտունի քաղաքում աղբահանության և փողոցների սանիտարական մաքրման համար:

3. Ծանուցել «Մարտունի քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ -ի բոլոր աշխատողներին հաստիքների առաջիկա հնարավոր կրճատումների մասին:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Ռ.ԴԱՎԹՅԱՆ

Ա.ՄՈՍՈՅԱՆ

Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա.ՋԻՐՈՅԱՆ

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Վ.ԴԱՎԹՅԱՆ

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 16

«01»-ը փետրվարի 2018թ. *Ք. Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41 -րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սահմանել Մարտունի համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու հետևյալ կարգն ու պայմանները.

ա/Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու ցանկություն ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պարտավոր է գրավոր դիմում ներկայացնել համայնքի ղեկավարի անունով՝ նշելով այն շենք- շինության հասցեն, որտեղ տեղադրվելու է արտաքին գովազդը:

բ/ Դիմումին կից պետք է ներկայացվեն արտաքին գովազդի էսքիզը և նախատեսվող չափերը:

գ/ Դիմումին կից պետք է ներկայացվի այն շենք- շինության սեփականության կամ օգտագործման իրավունքի վկայականը, որի վրա տեղադրվելու է արտաքին գովազդը:

դ/ Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժինը պետք է կատարի համապատասխան ուսումնասիրություն և տա իր եզրակացությունը տվյալ շենքի վրա արտաքին գովազդի տեղադրման հատվածի և չափերի վերաբերյալ:

ե/ Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների կառավարման և եկամուտների հավաքագրման բաժինը պետք է կատարի հաշվարկ, համապատասխան չափի գումարի գանձում և տրամադրի արտաքին գովազդ տեղադրելու սահմանված ձևի թույլտվություն:

զ/ Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների կառավարման և եկամուտների հավաքագրման բաժինը պետք է նախապատրաստի արտաքին գովազդի տեղադրման թույլտվության պայմանագիր:

է/Վերը նշված բոլոր փաստաթղթերի առկայության դեպքում համայնքի ղեկավարը պետք է կայացնի որոշում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալու մասին և որոշումը տրամադրի դիմումատուին:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Ռ.ԴԱՎԹՅԱՆ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՄՈՍՈՅԱՆ Վ.ԴԱՎԹՅԱՆ

Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ՋԻՐՈՅԱՆ Ա.ԳԱԼՍՏՅԱՆ